կազմում են մեր քաղաքի ներկայ տնտեսական դրութեան յատկանիշները։

Մի քիչ տարիներ թափվեցին Ա.Է. քաղաքապետ. Ա.Է. քաղաքապետը դրվեց քաղաքական զարգացման նրպատասող պայմանների մէջ և նիւթական բարգաւաճման ճանապարհի վրա, իսկ այսօր մեր քաղաքի հասարակութեան մեծ մասը, փոքրամասս բացառութեամբ, գժուարութեամբ ձեռք է բերում ապրուստի անհրաժեշտ պիտոյքը, իսկ մի մասն էլ, մուրացկանութեամբ, հազիւ հազ է կարողանում հայթայթել միայն ցամաք հաց։ Փոխանակ բարգաւաճելու այսօր մեր գաւառը մասնված ենք տեսնում մի հրէշաւոր թանգութեան, մի կիսասովի, Մէկ կողմից հրէշաւոր թանգութիւնը, իսկ միւս կողմից աղքատներ գործոց հոգնաթք դրութիւնը մատեց մեր նիւթական ոյժը։

Ամեն տեղ պարապութեան, ձախորդութեան և չքաւորութեան պատկերներ.... Այստեղ վաճառականը, առևտրի վատթար դրութիւնից դրամական անգործութեան հասած, ամի տեսակ անկարողութ է դարձել, իր ունեցած բոլոր ապրանքով, բոլոր առևտրիքով։ Ամեն տեղ արհեստաւորը կամ փակել էր իր արհեստանոցը, կամ օրվայ մեծ մասը անց է կացնում պարապութեան մէջ։ Մի ուրիշ տեղ խեղճ բանւորը ախատանք չը լինելուց կանգնել է վիրը ձուռ, մոլոր դրութեան մէջ։ Հեռաքրջիկ և միանգամայն զզվելի է, ներկայումս, մեր հուշկաւոր չափիտների կենցաղավարութեան ելոյթները։ Այս ծանրութեան և անարդարակարութեան հերոսները, այս հայհոյանքի մասնագէտները ամբողջ օրը պարապ, անգործ թափառում են փողոցէ փողոց, խումբ, խումբ, երբեմն ուրիշին հայհոյելով, կամ նրա հետ կռուելով, երբեմն էլ միմեանց գլուխ ջարդելով և ուրիշ անճոռնութիւններով։ Իսկ հաց, իսկ ապրուստ...։Աստուած ողորմած է։ այսօր մէկի կրպակը կը ծակեն, ապրանք կը գողանան, երկրորդ օրը միւսի տունը կը մտնեն և ունեցած չունեցածը բոլորը կը սրբեն կը տանեն. երրորդ օրը մի ուրիշի երկաթէ դրամարկղը կը ջարեն, չորրորդ օրը մի ուրիշ կնոջ ճակատի ոսկիքը կը փախցնեն և այսպէսութիւնով կապրեն։

Թանգութեան արդասիք է նոյնպէս և այն երևոյթը՝ որ մեզանում մի նշանաւոր քանակութեան է հասել մուրացկանների թիւը։ Այն ընտանիքները, որոնք վիրեթեան էժան տարիներում, վատ թէ լաւ, կարողանում էին իրանք իրանց կառավարել, այսօր ընկած են մուրացկանութեան դառն վիճակի մէջ։ Օր չի մնի, որ 5—6 մարդ թաչիկնակը ձեռներին փող չը հաւաքեն այս կամ այն չքաւոր ընտանիքի համար։ Այնպիսի ընտանիքների համար, որոնք մուրալ ամաչում են, որովհետև սովոր չեն մուրալու։ Կան և այն ատիճան չքաւոր գերդաստաններ, որոնց 7—8 տարեկան մանուկները անգամ սարքված են այս տարի, մուրացկանութեամբ իրանց ընտանիքի օրական պարենը հայթայթելու նպատակով։ Անկարելի է, առանց արտի խորին ցաւակցութեան, նայել այս թշուառ մուրալիկների վրա, որոնք, գլուխները բաց, մի ցնցոտի հագած, բոլոր ոտներով, ձիւնի և ցեխի մէջ գնալ դուռ ընկած՝ ողորմութիւն են խնդրում։ Ցաւալի է մանաւանդ՝ որ, հէնց մանկութեան առաջին տարիներից մտնում է նրանց մէջ ծուլութեան, ստորաքարշութեան և մուրացկանութեան ոգին. և արդէն մանկական հասակում, անդամալուծվում է նրանց մէջ ինքնուրոյնութեան զգացմունքը՝ միշտ առանց ախատանքի և միշտ ուրիշի ձեռքից ընդունելով իրանց ապրուստի միջոցը։

Մեր քաղաքի չքաւոր ընտանիքների անհ այս տնտեսական անհամ դրութիւնն էր՝ որ հարկադրեց մեր հասարակութեան ունեոր դասակարգին մի միջոց գտնել նրանց վիճակի դառնութիւնը մեղմացնելու համար։ «Մշակը» իր 20-րդ համարում, Ա.Է. քանդրապետից հաղորդված մի մանաւոր լրի տպագրութեամբ՝ արդէն յայտնել է ընթերցողներին որ մեր քաղաքում մի հանրական հանգանակութեան միջոցաս 15,000 բուբլի փող հաւաքվեց։ Այս փողով յանձնաժողովի անդամները գնեցին պլիւր և այս պլիւրից բաժանում են հիմա մեր չքաւորներին, բոլորովին անդարձաբար, իւրաքանչիւր մարդուն ամիսը մի պուդ։

Այս բարեգործական և խոնեմ կարգադրութիւնը բաւականին նպաստեց մուրացկանների թիւի քչանալուն։

Սակայն փետրվարի մէջին, պ. Նահանգապետի առաջարկութեան առիթով, տեղական կլուբի դահլիճում դարձեալ կայացաւ մի նոր ժողով։ Թանգութեան յառաջընթացութիւնը սահման դնելու և քաղաքի անօթի դասակարգին լիապէս բաւականացնելու համար, պ. Նահանգապետը առաջարկում էր հետագայում նորից 30,000 բուբլի էլ հաւաքել հանգանակութեամբ. այս գումարով բերել տալ պլիւր, ամրարել քաղաքում և ծախել հետզհետէ պլիւր չունեցողներին։ Քաղաքացիներից փետրվարի մէջին, բաւականին մարդիկ հաւաքվեցին կլուբի դահլիճում մի այսպիսի առաջարկութեան մասին խորհելու։ Այս ժողովը իր խոշոր թերութիւններով կարծես է անուշչա մի գրականական հարուածին։ Կրթողական լրագրի սեպուհ պարտականութիւնը պէտք է լինի հարուածելու մի այնպիսի ժողով, որը, իր խանվարների յատկութիւններով յանգեցնում է մի քաղաքական ժողովի անուն կրել իր վրա։ Ներս եա մտնում,—ոչ կարգ, ոչ կանոն...բոլոր բաղմութիւնը խառնված, մի անորոշ խառնիճաղանձ կազմութեան մէջ։ Մի ժողով, ուր ոչ նախագահն է յայտնի, ոչ կարգապահը. օրտեղ ոչ խօսողն է նշանարվում և ոչ լսողը, ոչ կարծիք յայտնողը, ոչ հերքողը, ոչ համաձայն և ոչ վիճաբանը։ Մի ժողով՝ ուր ոչ խօսելու հերթ կայ և ոչ լսելու պատշաճութիւն. այլ որտեղ ամենքն էլ խօսում են և ամենի խօսքերն էլ կորչում են անհասկանալի աղմուկի մէջ։ Վերջապէս մի ժողով որին, ամենայն վստահութեամբ «բաբելոնեան խառնակութիւն» անունը միայն կարելի է տալ։ Բաւական է որ՝ երբ դահլիճի մէջ մի տեղ, մի քանի մարդկանց մասնաւոր չրջանում, քննադատվող հարցի վերաբերութեամբ, որոշվում է՝ մի տան անդամից բաղկացած մասնաժողով ընտրել և երբ ուզում են սկիզբ տալ ընտրութեանը, ժողովի մնացեալ բազմութիւնը, մի հանրական շարժմունքից մակաբերելով՝ թէ ժողովը վերջացած է, իրար հրելով, հրմտելով վազում են դահլիճի դուռը և ուզում են դուրս թափել։ Բայց դահլիճի դուռը դրսից փակված է, ժողով կազմելու հրաւիրողը, արդէն վազուց կշտացած է իմացել է թէ ինչպիսի մարդիկներ։ հետ գործ ունի. այստեղ էլ գործ է դրել մի հարկաւոր նախազգուշութիւն՝ նոցա, մինչև ժողովի վերջը, դահլիճի մէջ պահելու համար։ Մի ժողովուրդ, որին անդադար պէտք է հասկացնել իր հասարակական պարտաւորութիւնը, մի ժողովուրդ, որին մի տեղ հաւաքելու համար, որ մի քաղաքային հարց կամ կարիք անորոշել, հարկաւորվում է դիմել կոչ միջոցների, մինչև անգամ և պոլիցիական ոյժի,—այսպիսի մի ժողովրդի հետ, յայտնի բան է, կը վարվին այսպէս։

Դահլիճից դուրս փախչել ցանկացողներին յետ են կանչում։ Նրանց հասկացնում են իրանց պարտաւորութիւնը. հասկացնում են որ՝ դեռ ժողովը վերջացած չէ, որ իրանց միջից տասը մարդ պէտք է ընտրեն մի մասնաժողով կազմելու համար. հասկացնում են և այդ ընտրելի մասնաժողովի պարտաւորութիւնը...վայ քեզ քաղաք...։ վերջապէս սկսվում է ընտրութիւնը. ընտրում են տասը մարդիկ, որոնք պարտաւորվում են՝ հասարակութեան կողմից մի որոշ պատասխան տալ տեղական կառավարութեանը պ. Նահանգապետի առաջարկութեան վերաբերութեամբ։

Ինչ որեց այս մասնաժողովը. հասարակութեան անձնենոնա դրութիւնը բացատրեց կառավարութեանը թէ նրա կողմից յայտնեց պատրաստակամութիւն մի երկրորդ հանգանակութիւն բանալու,—այս հարցերին դեռ չէ կարելի պատասխանել դրականապէս։

Ցեղացի

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

1 մայիսի

Վաղարշապատում հացի թանգութիւնը հասել է այն դրութեան՝ որ մեղրերից չատերը որդիներին տնից դուրս ձգելով, ասում էին. «գնացէք, կամ մեռէք օտարների դռներում, և կամ գտէք ձեզ համար մի պատառ հաց»։ Մեր գիւղը պատկանում է Ս. Էջմիածնին, բայց նա մեզ չէ կամենում կերակրել, չէ կամենում և ճանաչել, որովհետև այժմ տալու ժամանակ է.... Ս. Էջմիածինը լաւ համարեց գոնէ երեսնի պարսիկներին 200 խալվար (6000 պուդ) ցորեն ծախել և մեզ իր ոչխարի նման ժողովրդոյս քաղցած թողնել։ Արքունի չտեսարաններից այժմ օգնութիւն է լինում ժողովրդոց, բայց վաղարշապատցիներիս մասը չէ հասնում։ Մեզ ցոյց են տալի ս. Էջմիածնի չտեսարանները, ուր 600 խալվար (18000 պուդ) աւելի ցորեն կայ, բացի իրանց տարեկան գործածութիւնից։ Արդեօք ովքեր են լցրել այն չտեսարանները, եթէ ոչ վաղարշապատցիները, եղեսարդցիները, օշականցիները, մաստարեցիները և մանդեցիները,—թէ մի քանի մեծաւոր աղաներ և երեսնի պարսիկները, որոնք իրանց օգտին են ծառայեցնում մեր ձեռքերով վաստակած ս. Էջմիածնի չտեսարանները։ Ինչ է մտածում ուրեմն ս. Էջմիածինը, նրան դժուար թուեցաւ վանի սովելեալներին օգնելու, գոնէ մեզ, որ իր աչքի առաջն անա նոյնքան կարօտ ենք, ինչու դժուարանում է գոնէ մեզ օգնել և մեր տունից մեզ ողորմութիւն անել,—ողորմութիւն այն, բայց այն ես ոչ ձրի, այլ օրինաւոր պայմանով այժմ տալ և մեր հունձքի հասած ժամանակը՝ սասանալ, կամ այժմէն իսկ փողն սասանալ։ Մթեմ ս. Էջմիածինը չը գիտէ, որ չատ ընտանիքներ խոտ ուտելով են ապրում։ Անցեալ տարիները Զատիկի համար իւղ, պանիր, խաւեար, զուրգիէլ, չամաչի, ձուէնս, ձու և այլն ուրոնոգներու՝ այս տարի Զատիկն հացի եռեկին էինք մանգալիս։ Հրազալոյց երեկոյին հարիւրաւոր մարդիկներ տխուր սրտով, ձեռքներս կուրծքերնիս ծալած, ս. Էջմիածնի պարսպի մէջ հայր-սուրբերի դռներում մի մի պատառ հաց էինք խնդրում, բայց այդ հասարակաց հացերը այն ատիճան սառնասրտութեամբ էին վերաբերվում դէպի մեզ. և այնպէս խոժոռ դէմքեր էին ցոյց տալի՝ որ կարմրում եմ յիշատակել։ Նոքա՝ որ մեզ միշտ քարտզում են եկեղեցու ս. սեղանից բարի և ողորմած լինել, ինքնեանք, այն նշանաւոր երեկոյին չը զթալով մեր դրութեան վրա, նախատական խօսքերով էին պատասխանում մեզ։ Այդ նշանաւոր երեկոյին ամենքս միասին վեհարանի առաջն հաց, հաց էինք աղաղակում, և հացիս թէ քանի մի ժամէն մեր յուսահատական աղաղակները լսելի եղան Վեհափառ Հայրապետին, որը հրամայեց մի քանի խալվարի օգնութիւն անել, թէև փոխարինաբար։ Ահա մի քանի օր է, որ եկած են օշականցիները, որոնք նոյնպէս հաց են խնդրում, բայց տուող չը կայ։ Վեհափառը բարի է, Վեհափառը ժողովրդասէր է, ասում են Նորին Վեհափառութեան մօտ երթևեկողները.—Նա՝ որ ոչ է բան իր ժողովրդին չի խնայի։ Բայց չար լեզուներն ասում են՝ մի օտար երկրացի եպիսկոպոս է խառնակիչը, որից կախված է բոլոր միաբանութիւնը։ Ուշադրի թշուառ ժողովուրդը, թողած իր բոլոր գործերը և ընտանիքը, քանի օր է մեծ յոյսերով սպասում է. տեսնենք կը զթայ և օգնութիւն կանի նրանց ս. Էջմիածինը։ Թէպէտ և գիւղացիների յոյսը մեծ է Վ.Հ. Հայրապետի վրա,—Աստուած տար, որ յոյսերը յոյսեր չը մնայն,—և նա օգնէր իր կարօտ որդոցը, այս տարի գոնէ հաց տալով, չատ տարիներ առնելու նպատակաւ։

Ներեցէք երկու խօսք ես մեր դպրոցների վրա. արական դպրոցը յետ յետ է գնում, դառել է ուշով պոչ, ոչ երկարում է, ոչ կարճանում, այս մասին գրելիք բնաւ չունեմ։ Իսկ օրիորդական դպրոցը բաւական յաջող քայլերով է ընթանում։ Այս դպրոցում ուսուցանում է օրիորդ Մ. Մամիկոնեանցը, որը աւարտել է իր գիտութիւնը Թիֆլիսի օրիորդական գիմնազիայում, և որը իր կոչման վայել ընթացքով կրթում և ուսուցանում է մեր ապագայ մայրերին, կարևորութիւն չը տալով ստացած թշուկի սակաւութեանը, եռանդով գործում է յարգելի օրիորդը և վայելում է հասարակութեան համակրութիւնը։ Թեմական տեսչի մասին այնքան գրվեցաւ, որ կրկին գրել անհարմար եմ. առաջը կասէ. «Ասողացողին մէջ, չը հասկացողին հաղար և մէկ»։

Վաղարշապատցի

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

—

6 մայիսի

«Մշակի» 70 համարի «Հնագիտական ժողովը» անունով առաջնորդող յօդուածը յիշեցրեց ինձ Ուտիական ակադեմիա, Հայաստանի այն կոչը, որի ժողովրդի ծագումը, լեզուն և հնութիւնները մինչև այժմ, կարող եմ ասել հանելուկ են համարվում պատմութեան մէջ։ Այդ հանելուկը բացատրող իսկապէս ոչ ոք չէ եղել։ Մեր պատմութեան հայր Մովսէս խորենացին Ուտիայի և նորա միջի ազգաբնակութեան վրա չատ կցկտուր է խօսում։ Գնմ յիշում, որ ռուս ճանապարհորդը իր մի գրքուկի մէջ ուտիացիներին ռուսներից է սերված համարում։ Ցեսէք, թէ ինչպիսի բան։ Եւ այնպէս հանելուկ մինչև այժմ ես հանելուկ է մնացել։ Ուտիան, այդ պատմութեան համար մոռացած աշխարհը, որ հարուստ է իր ազգագրական, լեզուագիտական և հնագիտական երևոյթներով մի այսպիսի ժամանակ մոռանալ կարող է մի առաջնակարգ և գիտական գրոյի հետազօտութիւնների, եթէ գիտութեան համար այդ թանգագին հետազօտութիւնները կատարված լինեն մինչև եկող 1881 թուականի հնագիտական ժողովի բացվելը, մենք յուսով ենք, որ այդ ժողովը չի մերժի իր ուշադրութեան արժանի նիւթերից մէկը դարձնել նրանց։ Բայց ով պէտք է լինի այդ հետազօտութիւնները անողը։ Դեռ անցեալ տարի, երբ ես հանգամանքների բերմունքով ընկայ Նուխու գաւառը, պտտեց տեղեկացայ հասատատ ապրիւրներից, որ հայր Արիստակէս Սեղբակեանը, մի քանի անգամ չրջած լինելով Նուխու համարեա ամբողջ գաւառը, մտադիր է Ուտիական աշխարհի հազար ու մի փարագրութիւնները, ժողովրդի ա.ռանդութիւնները հաւաքել և ձեռնարկել մի գրքուկաք, որ կարող է լոյս գցել ուտիացիների ծագման, նրանց լեզուի և մի քանի այլ երևոյթների վրա։ Կարծիք չը կայ, որ մի այսպիսի գործ, մի այսպիսի աշխատութիւն կատարելապէս յաջողութիւն կունենայ հայր Սեղբակեանի պէս առաջնակարգ հոգևորականներից մէկի մօտ։

Այս նամակով ես ուրիշ նպատակ չունեմ, եթէ ոչ հրաւիրել հայր Արիստակէսի ուշադրութիւնը եկող տարվայ Թիֆլիսում բացվելի հնագիտական ժողովի վրա։ Թող «հայր սուրբը» չը մերժի իր մտադրած աշխատութիւնը ձեռք տալ և գրուշխ հասցնել այդ գործը, որ անշուշտ եկող տարուայ հնագիտական ժողովում կարող է արդիւնաւոր լինել և նշանաւոր տեղ բռնել։ Ժամանակը դեռ ես երկար է։ Մի տարվայ մէջ կարելի է մեծ գործ կատարել։ յուսով եմ, որ իմ հրաւէրս անուշադիր չի մնայ...

Յովհաննէս Աթանասեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 7 մայիսի

Ամսիս 4-ին, կիրակի երեկոյեան, Թիֆլիսի ժողովարանում Ներսիսեան դպրոցի երգչաց խումբը իրենց ուսուցիչ հայր Եղնիկի կառավարութեամբ և մասնակցութեամբ հայր Թադէոսի Թօշայէնիանեան և սարկաւագ Դաւթարոսի Յովհաննեան տուաւ «Հոգևոր երգեցողութիւն» կոնցերտ յօգուտ Վանայ սովելոց։ Ահա կոնցերտի բովանդակութիւնը, որ բաժանված էր երկու մասերիս։ Առաջին մասը սկսվեցաւ «Ով Տէր Աստուած» աղօթքով, որ երգեց խումբը չորս ձայնով։ Ապա հայր Թօշայէնիանեանը խմբի ներդաշնակ ձայնառութեամբ երգեց միայն «Պարզեսատուն ամենեցուն» շարականը։ Այնուհետև հայր Եղնիկը կարդաց հայ եկեղեցական ձայնագրութեան մասին և վերջացրեց մաղթելով Նորին Վեհափառութեան, իբրև սկզբնապատճառի այդ արհեստը ընդունելու և տարածելու, երկար կեանք։ Կարդալուց յետոյ խումբը երգեց չորս ձայնով «Բարձ, քանի հրաւիրեաս յանուն Վեհափառ Հայրապետի երգը, որով և վերջացաւ առաջին մասը։ 15 րոպէ միջոցից յետոյ սկսվեցաւ երկրորդ մասը, «Ով դու հայ-ազգարէս մաղթաքով, որ երգեց խումբը չորս ձայնով։ Ապա Ներսիսեան Դպրանոցի ուսանող պ. Աբուլեանը երգեց միայն խմբի ներդաշնակ ձայնառութեամբ «Ով սքանչելի և տեսիլ անաւոր չարականը։ Այնուհետև հայր Թօշայէնիանեանը կարդաց «Վանայ հայերը և նոցա դրութիւնը վերնագրով մի ճառ և վերջացրեց մաղթելով հաստատութիւն ռուսաց հզօր թէրութեան և երկար կեանք նորա զասկալ Աղէքսանդր ողորմած կայսեր ամենայն ռուսաց, որոյ հովանաւորութեան տակ հայ ազգը աւելի ապահով և խաղաղ կեանք է վայելում, քան Ցանկասատանում։ Հայր Թօշայէնիանեանի ճառից յետոյ խումբը երգեց չորս ձայնով «Տէր պահեա զկայսր մեր» և սորանով վերջացաւ հայոց կոնցերտը, իսկ թէ ինչ տպաւորութիւն ունեցաւ ժողովրդեան վրա, թողնում ենք ուրիշներին։ Կոնցերտի հաշիւը։ Մուտքը 5 օթեակների և 480 աթոռների տոմսակները բոլորը վաճառվեցան։ Բոլորի արժէքը 993 բուբլի է. բայց համակրութիւնը այնքան մեծ էր, որ չատ անձինք տոմսակի արժողութիւնից աւելի հատուցին—մանք տոմսակ չը լինելու պատճառով փող վճարելին և մեան ոմանք էլ աշխէ երիտասարդներից իրանց տոմսակները վերադարձրին կրկին վաճառելու դարձեալ յօգուտ սովելոց և իրանք տաքի կանգնեցան։ Ահա այս աւելորդ տուրքերից զոյացաւ հարիւր եօթն բուբլի։ Եթէ դիտենայիք թէ չէր վճարվի, մենք աւելով վճարողների թիւնները ս. ազգանունները և թէ տուած տարքերը յանգամ անուանէ կը յիշեինք այսպիսի Ներկայացումը հաղար հարիւր բուբլի Ներկը. դահլիճի ծառաներին և դռնապանները տրվեցաւ. վարձատրութիւն 21 բուբլի, ծաղկեցեալ աթոռները, տախտը և ամբիոնը բերելու և յետ տանելու համար տրվեցաւ դրօշին և մարմարիոնի 21 բ. 60 կոպ., Մանք ծախքեր եղան 9 բ. 10 կ. պէկ։ Բոլոր ծախքն է մնում և մի բուբլի 70 կ. Ներկը հանած մուտքից մնում է հազար քսան ռուբ. երեսուն կ.։ Սորանից ապահովեց 48 բ. 30 կ.։ Այս գումարից յանձնվեցաւ մեծ Ցոմ. Զիլիանեանին 1000 բուբլի, որը ուրախանալ